



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն**

ք. Երևան


«06» 12 2023թ N° 2466-ձ

**ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՌԵՏՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
ՏՆՏԵՍԱՊԵՍ ԲԱՐԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1867-Ն որոշման 4-րդ և 5-րդ կետերը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝
 - 1) ներդրումային պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,
 - 2) ներդրումային պայմանագրերի ռետստրի վարման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի,
 - 3) 2024 թվականի համար տնտեսապես բարդ ապրանքների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

 Recoverable Signature

X 

ՎԱՀԱՆ ՔԵՐՈՒՅԱՆ

Signed by: KERBYAN VAHAN 1110760124

ՎԱՀԱՆ ՔԵՐՈՒՅԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Օրինակելի ձև

ՀՀ, ք. Երևան

«օր» ամիս փարի թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) ի դեմս գլխավոր քարտուղար [անուն ազգանուն]-ի, ով գործում է Նախարարություն կանոնադրության հիման վրա մի կողմից,

«ընկերության անվանում» [ընկերության կազմակերպատիրավական ձև] ([պետական գրանցման երկիր, պետական գրանցման համար և ամսաթիվ, ՀՎՀՀ]) (այսուհետ՝ Տնտեսավարող սուբյեկտ) ի դեմս [պաշտոն/լիազորված անձ] [անուն ազգանուն] մյուս կողմից, ով գործում է Տնտեսավարող սուբյեկտի կանոնադրության կամ / [ամիս ամսաթիվ] տրված լիազորագրի հիման վրա, (այս և հետագայում Տնտեսավարող սուբյեկտին վերաբերող դրույթները կիրառելի են միայն Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1867-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելված 2-ի 6-րդ կետով նախատեսված դեպքում)

ԵՎ

«ընկերության անվանում» [ընկերության կազմակերպատիրավական ձև] ([պետական գրանցման համար և ամսաթիվ, ՀՎՀՀ]) (այսուհետ՝ Ներդրող) ի դեմս [պաշտոն/լիազորված

անձ] [անուն ազգանուն] մյուս կողմից, ով գործում է Ներդրողի կանոնադրության կամ / [ամիս ամսաթիվ] տրված լիազորագրի հիման վրա,

միասին հիշատակվելիս՝ Կողմեր, հիմք ընդունելով Որոշումը, կնքեցին սույն ներդրումային պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

Պայմանագրում կիրառվող և դրանով չսահմանված եզրույթներն ունեն Որոշմամբ դրանց տրված նշանակությունը:

1. Պայմանագրի առարկան.

1.1. Պայմանագրի համաձայն Ներդրողը պարտավորվում է իրականացնել Նախարարի՝ Ներդրողին/Տնտեսավարող սուբյեկտին Շահառու ճանաչելու մասին [ամիս ամսաթիվ] թիվ [հրամանի թիվ] հրամանի (այսուհետ՝ Հրաման) համաձայն հավանության արժանացած ներդրումային ծրագրի հայեցակարգում նկարագրված ծրագիրը (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ի, իսկ Նախարարությունը՝ Որոշմամբ սահմանված պահանջները և չափանիշները բավարարելու դեպքում՝ տրամադրել դրանով նախատեսված աջակցությունը:

2. Ներդրումային ծրագրի իրականացումը, չիրականցման դեպքերը և երաշխավորությունը.

2.1. Ներդրումային ծրագիրը համարվում է չիրականացված հետևյալ իրավիճակներից որևէ մեկի վրա հասնելու դեպքում.

2.1.1. Ներդրողը Հավելված 1-ով սահմանված ժամկետում չի իրականացրել Ներդրումային ծրագրով նախատեսված ծավալի կապիտալ ներդրումներ, բացառությամբ Պայմանագրի 4.4.2 և 2.2 կետերով սահմանված դեպքերի,

2.1.2. կապիտալ ներդրումների արդյունքում ստեղծված, ձեռքբերված, կառուցված, վերակառուցված, վերանորոգված կամ արդիականացված ակտիվների (այսուհետ՝ Ներդրումային ծրագրի ակտիվներ) կիրառմամբ տնտեսապես բարդ ապրանքների

արտադրության մեկնարկը (այսուհետ՝ Արտադրության մեկնարկ) տեղի չի ունեցել Հավելված 1-ով սահմանված ժամկետում, բացառությամբ Պայմանագրի 4.4.23 և 3.5 կետերով սահմանված դեպքերի,

2.1.3. Ներդրողը չի բավարարում Որոշման Հավելված 1-ի 2-րդ կետով սահմանված չափանիշներից որևէ մեկին,

2.1.4. բացահայտվում է Ներդրողի կողմից Շահառու ճանաչվելու փուլում, Որոշման Հավելված 2-ի 8-րդ կետով նախատեսված հաշվետվությունում (այսուհետ՝ Հաշվետվություն) կամ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի թիվ N – Լ հրամանի հավելված 2-ով սահմանված ռեեստրի (այսուհետ՝ Ռեեստր) վարման կարգի (այսուհետ՝ Ռեեստրի վարման կարգ) համաձայն Ռեեստրում Ներդրողի կամ Ներդրումային ծրագրի վերաբերյալ ներառման ենթակա ոչ հավաստի, թերի կամ ոչ ճշգրիտ տեղեկատվություն ներկայացրած լինելու փաստը, բացառության եթե այդ տեղեկատվությունը Որոշման կամ Ռեեստրի վարման կարգի համաձայն Ներդրողի կողմից ճշգրտվում կամ լրացվում է,

2.1.5. բացահայտվում է Ներդրողի կողմից Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններին Պայմանագրի ստորագրումից հետո դիտավորությամբ ոչ հավաստի, թերի կամ ոչ ճշգրիտ տեղեկատվություն ներկայացրած լինելու փաստը, բացառության եթե այդ տեղեկատվությունը ՀՀ օրենսդրության համաձայն Ներդրողի կողմից ճշգրտվում կամ լրացվում է,

2.1.6. Ներդրողն օգտվում է Հարկային օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված հարկային արտոնությունից,

2.1.7. Ներդրողը սահմանված ժամկետում չի ներկայացնում Հաշվետվությունը, բացառությամբ եթե ուշացման ժամկետը չի գերազանցում 2 (երկու) ամիսը,

2.1.8. մեկնարկի աջակցությունը ստանալուն հաջորդող 5 (հինգ) տարիների ընթացքում Ներդրումային ծրագրի ակտիվների կիրառմամբ արտադրված տնտեսապես բարդ ապրանքների ընդհանուր իրացման շրջանառությունը պակաս է Ներդրումային ծրագրով նախատեսված իրացման շրջանառության 75%-ից,

2.1.9. Ներդրողն իրացրել է Ներդրումային ծրագրի ակտիվները դրանց ստեղծմանը, ձեռքբերմանը, կառուցմանը, վերակառուցմանը, վերանորոգմանը կամ արդիականացմանը հաջորդող 5 (հինգ) տարիների ընթացքում,

2.1.10. Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

2.2. Նախարարության կողմից Պայմանագրի 4.4.2 կետում նախատեսված ժամկետում առարկություն ներկայացնելու դեպքում Կողմերը բանակցում են Ներդրումային ծրագրի ժամկացույցի փոփոխման այլընտրանքային տարբերակներ և ստորագրում Ներդրումային ծրագրի ժամանակացույցի փոփոխության մասին համաձայնություն:

2.3. Եթե առարկությունը ներկայացնելու օրվան հաջորդող 20 (քսան) օրվա ընթացքում Կողմերը համաձայնության չեն գալիս Ներդրումային ծրագրի նոր ժամանակացույցի վերաբերյալ, ապա Ներդրումային ծրագիրը համարվում է չիրականացված:

2.4. Պայմանագիրը ստորագրելով՝ Կողմերն ընդունում են, որ Տնտեսավարող սուբյեկտի՝ Շահառուի կարգավիճակը և դրանից բխող բոլոր իրավունքները և պարտավորություններն ամբողջ ծավալով փոխանցվում են Ներդրողին:

2.5. Անկախ Պայմանագրի 2.4 կետի դրույթներից՝ Պայմանագիրը ստորագրելով՝ Տնտեսավարող սուբյեկտը երաշխավորում է Ներդրողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը՝ դրանց չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում Նախարարության առջև կրելով սուբսիդիար պատասխանատվություն:

3. Արտադրության մեկնարկը

3.1. Ներդրողը Ներդրումային ծրագրի շրջանակներում տնտեսապես բարդ ապրանքների Արտադրության մեկնարկից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում մեկնարկի վերաբերյալ ծանուցում է Նախարարությանը՝ կցելով Արտադրության մեկնարկը հիմնավորող փաստաթղթեր, այդ թվում՝ համապատասխան սարքավորումները և (կամ) ենթակառուցվածքը շահագործման հանձնելու վերաբերյալ տեխնիկական եզրակացություն:

3.2. Արտադրության մեկնարկի վերաբերյալ ծանուցումը ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Նախարարությունը կարող է պահանջել մեկնարկը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր, ինչպես նաև այցելել տնտեսապես բարդ

ապրանքների արտադրության վայր՝ սարքավորումների և (կամ) ենթակառուցվածքների տեխնիկական զննություն իրականացնելու նպատակով՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով արտաքին փորձագետների:

3.3. Պայմանագրի 3.2 կետով նախատեսված տեխնիկական զննությանն արտաքին փորձագետների ներգրավելու դեպքում վերջիններիս վարձատրությունը փոխհատուցվում է Ներդրողի կողմից՝ մեկնարկի աջակցության գումարից հանելով փորձագետներին վճարված փաստաթղթավորված ծախսերը, որոնք չեն կարող գերազանցել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:

3.4. Այն դեպքում, երբ Նախարարության կողմից իրականացված տեխնիկական զննության արդյունքներով չի հաստատվում Արտադրության մեկնարկի պատշաճ կերպով կայացած լինելու փաստը, Կողմերը սկսում են բանակցություններ սարքավորումների, ենթակառուցվածքների կամ դրանց տեխնիկական շահագործման թերությունների շտկման ծրագրի և ժամանակացույցի շուրջ:

3.5. Պայմանագրի 3.4 կետով նախատեսված դեպքում Կողմերը տեխնիկական զննության օրվանից 1 (մեկ) ամսվա ընթացքում ստորագրում են Ներդրումային ծրագրի սարքավորումների, ենթակառուցվածքների կամ դրանց տեխնիկական շահագործման թերությունների շտկման ծրագրի և Ներդրումային ծրագրի ժամանակացույցի փոփոխման մասին համաձայնություն:

3.6. Պայմանագրի 3.4 կետով նախատեսված բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում Արտադրության մեկնարկը համարվում է չկայացած, իսկ Ներդրումային ծրագիրը՝ չիրականացված:

4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

4.1. Ներդրողը պարտավորվում է.

4.1.1. իրականացնել Ներդրումային ծրագիրը,

4.1.2. մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 30-ը Նախարարություն ներկայացնել Որոշման հավելված 2-ի 8-րդ կետով սահմանված բովանդակությանը և պահանջներին համապատասխանող Հաշվետվություն,

4.1.3. ապահովել Ռեեստրի վարման կարգի համաձայն Ներդրողի և Ներդրումային ծրագրի վերաբերյալ Ռեեստրում ներառման ենթակա տեղեկության տրամադրումը Նախարարության պատասխանատու ստորաբաժանմանը՝ այդ տեղեկության ի հայտ գալուն կամ փոփոխությանը հաջորդող 40 (քառասուն) օրվա ընթացքում,

4.1.4. ապահովել Պայմանագրի համաձայն Նախարարությանը տրամադրման ենթակա տեղեկության ներկայացման գործընթացի համակարգման և համապատասխան հաշվետվողականության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակումը,

4.1.5. Նախարարության կողմից պահանջ ստանալու դեպքում ողջամիտ ժամկետում վերջինիս տրամադրել Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների պատշաճ կատարման կամ Ներդրումային ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և (կամ) ապացույցներ,

4.1.6. ապահովել Նախարարության կողմից Ներդրումային ծրագրի նկատմամբ ուսումնասիրության անխոչընդոտ իրականացումը, այդ թվում՝ Նախարարության և վերջինիս ներկայացուցիչների կողմից տնտեսապես բարդ ապրանքների արտադրության գործող կամ նախատեսվող վայր այցելությունների, Ներդրումային ծրագրի ակտիվների տեխնիկական զննությունների իրականացումը,

4.1.7. Նախարարությանը տեղեկացնել Ներդրումային ծրագրի փոփոխությունների մասին,

4.1.8. ապահովել Պայմանագրի համաձայն Նախարարությանը տրամադրվող տեղեկության հավաստի, ճշգրիտ և լիարժեք լինելը,

4.1.9. իր կողմից սխալ կամ թերի տեղեկության ներկայացման դեպքի մասին Նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից տեղեկանալու օրվան հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Որոշման և (կամ) Ռեեստրի վարման կարգի պահանջներին համապատասխան շտկել (լրացնել) տեղեկությունը և շտկված

(լրացված) տեղեկությունը ներկայացնել Նախարարության պատասխանատու ստորաբաժանմանը,

4.1.10. վճարել Պայմանագրի 3.3 կետով նախատեսված փոխհատուցման գումարը,

4.1.11. Նախարարությանը տեղեկացել իր սեփականատերերի կազմի փոփոխությունների և վերակազմակերպումների մասին,

4.1.12. Ներդրումային ծրագիրն իրականացնելիս հետևել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:

4.2. Նախարարությունը պարտավորվում է.

4.2.1. տրամադրել Որոշմամբ սահմանված աջակցությունը դրանով նախատեսված կարգով և չափով,

4.2.2. Որոշման համաձայն դիտարկել Ներդրողի կողմից ներկայացված հաշվետվությունները, աջակցություն ստանալու դիմումները և Որոշման կամ Պայմանագրի ներքո Նախարարությանը փոխանցված այլ փաստաթղթերը և տեղեկատվությունը,

4.2.3. իր իրավասությունների շրջանակներում ապահովել Հայաստանի Հանրապետությունում Ներդրողի իրավունքների անխափան իրականացումը և ներդրումների պաշտպանությունը՝ համաձայն Պայմանագրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

4.3. Տնտեսավարող սուբյեկտը պարտավորվում է.

4.3.1. ապահովել Ներդրողի կողմից Ներդրումային ծրագրի իրականացումը,

4.3.2. ժամանակին կատարել Պայմանագրի 2.5 կետով սահմանված երաշխավորությունից բխող վճարումները:

4.4. Ներդրողն իրավունք ունի.

4.4.1. պահանջել Որոշմամբ սահմանված աջակցության վճարումը,

4.4.2. պահանջել Նախարարությունից Պայմանագրով նախատեսված ուսումնասիրությունն իրականացնելիս չխոչընդոտել իր տնտեսական գործունեությանը,

4.4.3. կապիտալ ներդրումների իրականացման կամ Արտադրության մեկնարկի՝ Ներդրումային ծրագրի ժամանակացույցով նախատեսված որևէ ժամկետի վրա հասնելուց առնվազն 1 (մեկ) ամիս առաջ Նախարարությանը ծանուցել ժամկետի հնարավոր շեղումների մասին՝ ներկայացնելով հիմանավոր պատճառաբանումներ: Եթե Նախարարությունը ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում չի հայտնում իր առարկությունների մասին, ապա Ներդրումային ծրագրի ժամանակացույցը համարվում է համապատասխանաբար փոփոխված: Պայմանագրի իմաստով Ներդրումային ծրագրի ժամանակացույցից շեղում չի համարվում սահմանված ժամանակացույցից մինչև 2 (երկու) ամիս ժամկետով ուշացումը:

4.5. Նախարարությունն իրավունք ունի.

4.5.1. Ներդրողից պահանջել Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների պատշաճ կատարման կամ Ներդրումային ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և (կամ) ապացույցներ,

4.5.2. անհրաժեշտության դեպքում իրականացնել Ներդրումային ծրագրի ընթացիկ ուսումնասիրություն՝ այցելություններ կատարելով տնտեսապես բարդ ապրանքների արտադրության գործող կամ նախատեսվող վայր, իրականացնելով Ներդրումային ծրագրի ակտիվների տեխնիկական զննություններ՝ այդ թվում արտաքին փորձագետների ներգրավմամբ,

4.5.3. պահանջել Ներդրողից չխոչընդոտել, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օժանդակել Նախարարությանը և վերջինիս ներկայացուցիչներին Ներդրումային ծրագրի՝ Պայմանագրի 4.5.2 կետով նախատեսված ընթացիկ ուսումնասիրությանը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Ներդրողը պատասխանատվություն է կրում Ներդրումային պայմանագիրը չիրականացնելու համար՝ հետևյալ կանոնների համաձայն՝

5.1.1. Պայմանագրի 2.1.1 կամ 2.1.2 կետերով նախատեսված դեպքերում Ներդրողը փոխհատուցում է Ներդրումային ծրագրի գնահատման ուղղությամբ Նախարարության կրած ծախսերը, որոնք Պայմանագրի համաձայն գնահատվում են 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

5.1.2. Պայմանագրի 2.1.4 կետով նախատեսված դեպքում Ներդրողը Նախարարությանը վերադարձնում է ոչ հավաստի, թերի կամ ոչ ճշգրիտ տեղեկատվության հիման վրա Ներդրողին վճարված աջակցության գումարը, ինչպես նաև վճարում տուժանք՝ աջակցության նշված գումարի 0,5%-ի չափով,

5.1.3. Պայմանագրի 2.1.8 կետով նախատեսված դեպքում Ներդրողը Նախարարությանը վերադարձնում է աջակցության ստացված գումարը, ինչպես նաև վճարում ստացված աջակցության 0,5%-ի չափով տուժանք, բացառությամբ Պայմանագրի 6.3.3 կետով նախատեսված դեպքի:

5.1.4. Պայմանագրի 2.1.8 կետով նախատեսված դեպքում Ներդրողը Նախարարությանը վերադարձնում է ստացված աջակցության գումարը, ինչպես նաև վճարում կապիտալ ներդրումների 0,5%-ի չափով տուժանք, բացառությամբ Պայմանագրի 7.3.3 կետով նախատեսված դեպքի:

5.2. Կողմերը գիտակցում են, որ Պայմանագիրը կնքելով մտնում են քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ՝ կրելով դրանից բխող՝ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն: Ներդրողն ազատվում է Պայմանագրի կատարման համար պատասխանատվությունից, եթե Ներդրումային ծրագրի իրականացումը ենթադրում է ՀՀ օրենսդրությամբ արգելված գործողության կատարում:

5.3. Պայմանագրի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես դիտավորությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության սահմանափակում:

5.4. Պայմանագրով Նախարարությունը Ներդրողի առջև պատասխանատվություն է կրում բացառապես պատճառված ուղղակի իրական վնասի համար:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր).

6.1. Կողմերը Պայմանագրի ներքո պատասխանատվություն չեն կրում, եթե պարտականության չկատարումը հանդիսացել է անհաղթահարելի ուժի հետևանք, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի հանգամանքներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, այլ բնական կամ տեխնաժին աղետները, պատերազմները, համաճարակները, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, քաղաքացիական անհնազանդության դրսևորումները, զանգվածային անկարգությունները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, ֆինանսական կամ այլ սանկցիաները և այլն: Նշված հանգամանքների առաջացման դեպքում յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է դրանց մասին առաջին հնարավորության դեպքում գրավոր ձևով տեղեկացնել մյուս Կողմին, ինչի դեպքում պարտավորությունների կատարման ժամկետը հետաձգվում է այն ժամանակին համաչափ, որի ընթացքում գործում են նշված հանգամանքները և դրանց հետևանքները:

6.2. Անհաղթահարելի ուժի ազդեցության վերացման պահից Կողմերը պարտավորվում են շարունակել Պայմանագրի կատարումը և չեն կարող հրաժարվել ստանձնած պարտավորությունների և Պայմանագրի կատարումից կամ դադարեցնել Պայմանագրի գործողությունը:

6.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության վերացումից հետո անհրաժեշտության դեպքում Կողմերի միջև կազմվում է արձանագրություն և հաստատվում է Ներդրումային ծրագրի իրականացման նոր ժամանակացույց:

6.4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունն ավելի քան 6 (վեց) ամիս շարունակվելու դեպքում Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնել Պայմանագիրը այդ մասին մյուս Կողմին ծանուցելով առնվազն 1 (մեկ) ամիս առաջ:

7. Պայմանագրի ժամկետը և դադարեցումը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում բոլոր Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում մինչև Ներդրումային ծրագրի ավարտը: Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել

Կողմերի համաձայնությամբ՝ Որոշման պահանջների պահպանմամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

7.2. Նախարարությունն իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը վերջինիս 2.1 կետով նախատեսված դեպքերում՝ առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ այդ մասին ծանուցելով Ներդրողին:

7.3. Ներդրողն իրավունք ունի Նախարարությանն առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ ծանուցելով՝ դադարեցնել Պայմանագիրը հետևյալ դեպքերում և կարգով.

7.3.1. մինչև մեկնարկի աջակցության տրամադրումը՝ վճարելով Պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված փոխհատուցման գումարը,

7.3.2. Արտադրության մեկնարկի օրվանից առնվազն 5 (հինգ) տարի հետո՝ Պայմանագրի 2.1.8 կետով նախատեսված դեպքում վճարելով Պայմանագրի 5.1.3 կետով նախատեսված գումարը,

7.3.3. Արտադրության մեկնարկի օրվան հաջորդող 5 (հինգ) տարվա ընթացքում՝ հիմնավորելով Ներդրումային ծրագրի հետագա իրականացման անհնարինությունը կամ աննպատակահարմարությունը՝ Նախարարության համաձայնությամբ, ինչի դեպքում Կողմերը ստորագրում են Պայմանագրի լուծման մասին համաձայնություն, որով կարող է նախատեսվել Ներդրողի կողմից Ներդրումային ծրագրի դադարեցման համար Նախարարությանը փոխհատուցման ենթակա գումար:

7.4. Պայմանագրով Կողմերի համար սահմանված բոլոր պարտավորություններն իրենց չսպառված մասով շարունակում են գործել Ներդրումային ծրագիրն ամբողջությամբ իրականացվելուց հետո և փոխանցվում են Կողմերի իրավահաջորդներին (առկայության դեպքում):

8. Կողմերի հաղորդակցությունը

8.1. Կողմերի միջև պաշտոնական հաղորդակցությունն իրականացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Պայմանագրի վավերապայմաններում նշված էլեկտրոնային փոստերի միջոցով:

9. Վեճերի լուծում, կիրառելի իրավունք և Պայմանագրի մեկնաբանություն

9.1. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.2. Պայմանագրից ծագած և/կամ դրա հետ կապված վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Վեճի ծագման պահից 3 (երեք) ամսվա ընթացքում այն բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում վեճը կարող է հանձնվել Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանների լուծմանը:

9.3. Պայմանագրի դրույթները մեկնաբանվում են Որոշմամբ ամրագրված աջակցության ծրագրի բովանդակությունից և նպատակներից ելնելով:

10. Եզրափակիչ դրույթներ.

10.1. Պայմանագիրը ստորագրելով՝ Ներդրողը համաձայնում է, որ, Նախարարությունն իրավունք ունի մշակել վերջինիս անձնական տվյալները, ինչպես նաև Ներդրողի կողմից Նախարարությանը փոխանցվող այլ անձանց անձնական տվյալները աջակցության տրամադրումն ապահովելու նպատակով: Այլ անձանց վերաբերյալ անձնական տվյալներ Նախարարությանը փոխանցվելու պարագայում Ներդրողը պարտավոր է ստանալ նշված անձանց համաձայնությունը և փոխանցել Նախարարությանը: Ներդրողը համաձայնում է, որ Նախարարությունը կարող է Ներդրողի անձնական տվյալները տրամադրել երրորդ անձանց, ներառյալ, բայց չսահմանափակելով՝ իր արտաքին փորձագետներին և այլ պետական մարմինների:

10.2. Պայմանագիրը ստորագրելով՝ Ներդրողը համաձայնում է իր, Ներդրումային ծրագրի և իրեն տրամադրվող աջակցության վերաբերյալ Ռեեստրի վարման կարգով սահմանված՝ հանրության համար հասանելի տեղեկության հրապարակմանը Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում:

10.3. Կողմերը և նրանց ներկայացուցիչները երաշխավորում են, որ ունեն անհրաժեշտ լիազորություններ Պայմանագիրը ստորագրելու համար:

10.4. Պայմանագրով չնախատեսված դրույթները կարգավորվում են Որոշմամբ սահմանված պահանջներով:

10.5. Պայմանագիրը կազմված է երկու/երեք հավասարազոր օրինակներից՝ հայերենով: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

11. Կողմերի հասցեները, բանկային և այլ վավերապայմանները և ստորագրությունները.

**Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարություն**

Հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան
Մհեր Մկրտչյան 5
ՀՎՀՀ՝ 02698604

ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ 900011018695

էլ. փոստ:

գլխավոր քարտուղար՝
(անուն, ազգանուն)

Ներդրող

[«Ընկերության անվանում»]
[Կազկակերպահրավական ձև]

Հասցե՝ [հասցե]
ՀՎՀՀ՝

Բանկ՝ [բանկի անվանում]

հ/հ՝ [հաշվեհամար]

էլ. փոստ:

իրավասու պաշտոնատար անձ/

լիազորված անձ
(անուն, ազգանուն)

Տնտեսվարող սուբյեկտ

[«Ընկերության անվանում»]
[Կազկակերպահրավական ձև]

Հասցե՝ [հասցե]

ՀՎՀՀ՝

Էլ^Է փոստ:

իրավասու պաշտոնատար անձ/

լիազորված անձ

(անուն, ազգանուն)

Հավելված 1

[ամիս, ամսաթիվ] կնքված Ներդրումային պայմանագրի՝

Ներդրումային ծրագրի անվանումը

¹ Սույն հավելվածում առնվազն ներառվում է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1867-Ն որոշման Հավելված 1-ով նախատեսված տեղեկատվությունը:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ

1. Սույն կարգը (այսուհետ՝ «Կարգ») սահմանում է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1867-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված աջակցության տրամադրման ծրագրի շահառու ճանաչված տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված ներդրումային պայմանագրերի ռեեստրի (այսուհետ՝ Ռեեստր) ձևավորման և վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները, այդ տեղեկությունների՝ Ռեեստրում ներառման և դրանց հասանելիության տրամադրման կարգը:
2. Կարգում օգտագործվող հասկացություններն ունեն Որոշմամբ դրանց տրված նշանակությունը:
3. Ռեեստրի ձևավորումն ու վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գործարար միջավայրի վարչության (այսուհետ՝ պատասխանատու ստորաբաժանում) կողմից էլեկտրոնային եղանակով՝ հավաքագրելով, ռեեստրում մուտքագրելով և համակարգելով անհրաժեշտ տեղեկությունը:
4. Ռեեստրը ներառում է Կարգի 7-րդ կետով նախատեսված տեղեկությունները:
5. Շահառու ճանաչված և ներդրումային պայմանագիր ստորագրած տնտեսավարող սուբյեկտը Որոշման հավելված 2-ի 8-րդ կետի համաձայն ներկայացնում է տարեկան հաշվետվություն: Տարեկան հաշվետվությունը Նախարարության էլեկտրոնային փոստին մուտք լինելուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը պահանջվող տեղեկությունները գրանցում է ռեեստրում:

6. Ռեեստրում Կարգի 5-րդ կետով սահմանված ժամկետում կատարվում է գրառում նաև այն դեպքերում, եթե շահառուն այդ նպատակով դիմում է Նախարարություն կամ շահառուի վերաբերյալ էական տեղեկություններ են բացահայտվում հարկային կամ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմնի կողմից, և այդ տեղեկությունը փոխանցվում է Նախարարությանը:

7. Ռեեստրը բաղկացած է յուրաքանչյուր շահառուի համար վարվող աղյուսակից՝ ըստ հետևյալ դաշտերի.

- 1) շահառուի անվանում,
- 2) ներդրումային ծրագիրը նախաձեռնած տնտեսավարող սուբյեկտի անվանում (եթե տարբեր է շահառուից), պետական գրանցման երկիր և համար,
- 3) շահառուի ՀՎՀՀ,
- 4) շահառուի պետական գրանցման համար,
- 5) շահառուի գրանցման հասցե, գործունեության վայրի հասցե (եթե տարբեր է),
- 6) շահառուի գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն,
- 7) շահառուի կոնտակտային տվյալներ՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե,
- 8) շահառու ճանաչվելու հրամանի հերթական համար և ամսաթիվ,
- 9) ներդրումային պայմանագրի համար և ամսաթիվ,
- 10) շահառու ճանաչվելու ամսաթվին նախորդող տարվա իրացման շրջանառություն (առկայության դեպքում)՝ ըստ ապրանքատեսակների (ԱՏԳ ԱԱ ծածկագրերի),
- 11) շահառու ճանաչվելու ամսաթվին նախորդող տարվա աշխատողների միջին ցուցակային թվաքանակը,
- 12) շահառուի տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչները,
- 13) նախատեսված կապիտալ ներդրումների ծավալը,
- 14) կապիտալ ներդրումների իրականացման արդյունքում ստեղծված, ձեռք բերված, կառուցված, վերակառուցված, արդիականացված, վերանորոգված ակտիվների (այսուհետ՝ ներդրումային ծրագրի ակտիվներ)՝ շահագործման հանձնելու նախատեսված ամսաթիվը,

- 15) ռեեստրում յուրաքանչյուր գրանցման ամսաթիվը և այն հաշվետու ժամանակաշրջանը, որի վերաբերյալ կատարվում է գրանցումը,
- 16) ռեեստրում գրանցում կատարող աշխատակցի անուն, ազգանուն և պաշտոն,
- 17) ներդրումային ծրագրի կարգավիճակը և դրա նկարագրությունը՝ ըստ ներդրումային հայեցակարգի ժամանակացույցի,
- 18) ներդրումային ծրագրի կարգավիճակը հաստատող փաստաթղթի նկարագրությունը,
- 19) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված կապիտալ ներդրումները՝ ըստ ակտիվների խմբերի, և համադրությունը ներդրումային ծրագրով նախատեսված ցուցանիշների հետ,
- 20) ներդրումային ծրագրի ֆինանսավորման փաստացի կառուցվածքը՝ ըստ ներգրավված միջոցների աղբյուրների և ծավալների, և համադրությունը ներդրումային ծրագրով նախատեսված ցուցանիշների հետ,
- 21) հաշվետու ժամանակաշրջանի համար շահառուի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը,
- 22) ներդրումային ծրագրի հայեցակարգի և կից փաստաթղթերում ներկայացված տեղեկությունների էական փոփոխությունների և շեղումների (առկայության դեպքում) վերաբերյալ տեղեկություն,
- 23) շահառուի՝ Որոշման հավելված 2-ի 8-րդ կետով նախատեսված աուդիտորական եզրակացության ամսաթիվը, աուդիտորական եզրակացությունը տրամադրած ընկերությունը և դրանում որևէ վերապահման առկայության վերաբերյալ տեղեկություն,
- 24) աուդիտորական եզրակացությամբ հաստատված և հաշվետու ժամանակաշրջանում արտադրված և (կամ) իրացված արտադրանքի ծավալը՝ ըստ ապրանքատեսակների (ԱՏԳ ԱԱ ծածկագրի) և դրանց տնտեսական բարդության, ինչպես նաև իրացման (առկայության դեպքում) շրջանառության ներքին և արտաքին շուկաների բացվածքի (ներառյալ՝ հաշվետու ժամանակաշրջանի իրացման շրջանառությունում տնտեսապես բարդ ապրանքների իրացման շրջանառության մասնաբաժինը (%)),

- 25) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում եռամսյակային կտրվածքով տնտեսապես բարդ ապրանքների իրացման շրջանառությունը և դրա հարաբերակցությունը իրականացված կապիտալ ներդրումներին գումարին,
- 26) ներդրումային ծրագրի՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտին առկա ակտիվների՝ աուդիտորական եզրակացությամբ հաստատված և իրական արժեքները դրանց ստեղծման (ծեռքբերման, կառուցման, վերակառուցման, արդիականացման, վերանորոգման) պահին,
- 27) հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված եկամտային հարկի գումարը,
- 28) հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահութահարկի գումարը,
- 29) մեկնարկի աջակցության հաշվարկված և աուդիտորական եզրակացությամբ հաստատված գումար,
- 30) հոսքի աջակցության գումար,
- 31) միանվագ աջակցության չափը (կիրառելիության դեպքում),
- 32) աջակցության առավելագույն չափը,
- 33) աջակցության տրամադրման մասին հրաման (հրամանների) համարը և ամսաթիվը,
- 34) հաշվետու ժամանակաշրջանի համար տրամադրված աջակցության գումարի չափը,
- 35) նախորդ տարիներին տրամադրված բոլոր տեսակների աջակցության գումարի ընդհանուր չափը:

8. Պատասխանատու ստորաբաժանումն ապահովում է շահառուի կողմից Որոշման և ներդրումային պայմանագրի շրջանակներում տրամադրված տեղեկության՝ իրեն հասանելի տեղեկության հետ համադրումը և այդ սահմաններում դրա հավաստիության և լիարժեքության ստուգումը:

9. Կարգի 8-րդ կետով սահմանված նպատակի իրագործման համար պատասխանատու ստորաբաժանումն իրավունք ունի, ի դեմս Նախարարության, հարցումներ կատարել (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ:

10. Շահառուի կողմից սխալ կամ թերի տեղեկության ներկայացման դեպքի բացահայտման պարագայում պատասխանատու ստորաբաժանումը բացահայտման օրվան հաջորդող 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկությունը ռեեստրում ներառելու անհնարինության

մասին տեղեկացնում է շահառուին այդ մասին կատարելով համապատասխան նշում Ռեեստրում:

11. Շահառուի կողմից շտկված (լրացված) տեղեկությունը ներդրումային պայմանագրի համաձայն պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնելու դեպքում շտկված (լրացված) տեղեկությունը Կարգի 5-րդ կետով սահմանված ժամկետում ներառվում է ռեեստրում: Շահառուի կողմից շտկված (լրացված) տեղեկությունը ներդրումային պայմանագրի համաձայն պատասխանատու ստորաբաժանմանը չներկայացնելու դեպքում՝ այդ մասին ռեեստրում գրառում է կատարվում՝ Կարգի 5-րդ կետով սահմանված ժամկետում՝ հաշվելով դրա սկիզբը ներդրումային պայմանագրով դրա համար նախատեսված ժամկետի վերջին օրվանից սկսած:

12. Կարգի 7-րդ կետով սահմանված տեղեկություններից հանրության համար հասանելի են կարգի 7-րդ կետի 1-6-րդ, 12-րդ, 29-32-րդ և 35-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները, որոնք հրապարակվում են Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում դրա՝ ռեեստրում ներառվելուց 40 (քառասուն) օրվա ընթացքում:

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի
դեկտեմբերի 6-ի N 2466-Լ հրամանի

ՏՆՏԵՍԱՊԵՍ ԲԱՐԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

| ԱՏԳ ԱԱ ծածկագիր | Տնտեսական բարդության ցուցիչը | Դիրքի անվանումը |
|--------------------|------------------------------------|---|
| 6602 | 0.202 | Ձեռնափայտ, խարազան, մտրակ |
| 8513 | 0.203 | Ձեռքի էլեկտրական լապտեր, մասեր |
| 3402 | 0.204 | Լվացող պատրաստուկ (բացի օճառից) |
| 6812 | 0.209 | Մանրաթել՝ ասբեստային, մշակված. ասբեստի կամ ասբեստի ու մագնեզիումի կարբոնատի (մագնեզիտ) հիմքով խառնուրդներ. այդ խառնուրդներից կամ ասբեստից արտադրատեսակներ (օրինակ՝ թելեր, գործվածքներ, հագուստ, գլխի հարդարանքներ, կոշիկներ, միջադիրներ)՝ ամրանավորած կամ չամրանավորած՝ բացի 6811 կամ 6813 ապրանքային դիրքերում ընդգրկված ապրանքներից |
| 4017 | 0.210 | Կոշտ ռետին, իրեր, թափոն և մնացորդ |
| 7608 | 0.210 | Ալյումինե խողովակ և փողակ |
| 8604 | 0.212 | Տրանսպորտային միջոցներ ինքնագնաց կամ ոչ ինքնագնաց |
| 3925 | 0.218 | Պլաստմասսայից շինարարական դետալ |
| 9701 | 0.218 | Ձեռքով արված նկար |
| 7013 | 0.224 | Ապակյա սպասք խոհանոցի և ճաշի |
| 4303 | 0.224 | Մորթե հագուստ, պարագաներ |
| 9006 | 0.226 | Լուսախցիկ, լուսաբոնկիչ, մասեր |
| 3303 | 0.227 | Օճանելիք և հարդարաջուր |
| 4418 | 0.227 | Փայտե շինարարական իրեր, մանրահատակ |
| 2621 | 0.231 | Այլ խարամ եւ մոխիր ներառյալ՝ ծովային ջրիմուռներից մոխիրը (կելպ). մոխիր եւ մնացորդներ՝ ստացված քաղաքային տնտեսության թափոնների այրումից |
| 8602 | 0.232 | Երկաթուղային լոկոմոտիվներ՝ այլ. լոկոմոտիվային տենդերներ |
| 5501 | 0.235 | Լարան սինթետիկ թելից |
| 2840 | 0.238 | Բորատներ և պերբորատներ |
| 7117 | 0.239 | Բիժուտերիա |
| 4007 | 0.240 | Վուլկանացված ռետինե թելեր և կորդ |
| 2831 | 0.247 | Երկթոնիտներ եւ սուլֆօքսիլատներ |
| 4702 | 0.250 | Փայտի թաղանթանյութ՝ լուծվող տեսակները |
| 7309 | 0.253 | Ամբար, ցիստոն և այլ սև մետաղե տարա >300 Լ |

| | | |
|------|-------|--|
| 9401 | 0.254 | Կահույք նստելու, մասեր |
| 8310 | 0.261 | Ցուցատախտակներ ցուցանշաններով, անվանումներով ոչ թանկարժեք մետաղից |
| 2806 | 0.264 | Աղաթթու |
| 8007 | 0.265 | Այլ արտադրանք անագից |
| 2821 | 0.272 | Երկաթի օքսիդներ եւ հիդրօքսիդներ. ներկանյութեր հանքային, որոնք պարունակում են 70% զանգվածային բաժին կամ ավելի քիմիապես կապված երկաթ՝ Fe2O3-ի վերահաշվարկով. |
| 3306 | 0.278 | Բերանի խոռոչի և ատամների հիգիենիայի միջոց |
| 8435 | 0.278 | Մամլիչներ, ջարդիչներ և համանման մեքենաներնր գինեգործության, սիդրի, մրգահյութերի կամ համանման ըմպելիքների արտադրության համար |
| 5503 | 0.280 | Սինթետիկ մանրաթել (մանելու համար չմշակված) 166" |
| 5506 | 0.280 | Սինթետիկ մանրաթել (մանելու համար մշակված) |
| 6601 | 0.290 | Հովանոցներ եւ արեւապաշտպան հովանոցներ (ներառյալ՝ հովանոց-ձեռնափայտերը, պարտեզի հովանոցները եւ նույնանման հովանոցները). |
| 7316 | 0.294 | Սև մետաղե խարիսխ, մասեր |
| 3804 | 0.297 | Մոխրաջուր (մնացած ցելյուլոզայի արտադրման ժամանակ) |
| 2803 | 0.300 | Ածխածին (մեթանային և ացետիլենային) |
| 9015 | 0.300 | Երկրաբանական սարքավորում և գործիք, մասեր |
| 4109 | 0.301 | լաքապատ կաշի, մետաղացված կաշի |
| 8803 | 0.301 | Թռչող սարքերի և ապարատների մասեր |
| 4823 | 0.311 | Որոշակի նպատակների համար կտրատված թուղթ և սովարաթուղթ |
| 9303 | 0.315 | Հրազենային այլ զենք եւ նույնանման սարքվածքներ, որոնք գործում են պայթուցիկ լիցքի օգտագործման միջոցով (օրինակ՝ սպորտային զենքեր եւ հրացաններ, հրազենային զենք, որը լիցքավորվում է փողից, հրթիռանետներ եւ այլ սարքվածքներ միայն ազդանշանային հրթիռներ բաց թողնելու համար, ատրճանակներ եւ ռետլվերներ՝ դատարկ գնդակներով կրակելու համար, ատրճանակներ թռչող ձողերով՝ կենդանիների «հումանիստական» սպանդի համար, լինեմետներ) |
| 2815 | 0.316 | Նատրիումի եւ կալիումի հիդրօքսիդ եւ պերօքսիդ |
| 9007 | 0.317 | Կինոսարքավորում, մասեր |
| 7210 | 0.325 | Երկաթից կամ չլեգիրված պողպատից հարթ գլանվածք՝ 600 մմ կամ ավելի լայնությամբ, երեսապատված, գալվանական կամ այլ ծածկույթով |
| 9613 | 0.328 | Կրակայրիչներ՝ նախատեսված ծխախոտների համար, եւ այլ կրակայրիչներ, ներառյալ՝ մեխանիկական եւ էլեկտրական կրակայրիչները եւ դրանց համար նախատեսված մասերը՝ բացի կայծքարերից եւ պատրույզներից |
| 9201 | 0.332 | Դաշնամուր և այլ ստեղնալարային գործիք |
| 5907 | 0.332 | Նկարագարդ թատերական կտավ |

| | | |
|------|-------|--|
| 3307 | 0.336 | Սափրվելու համար օգտագործվող միջոց, հոտազերծիչ |
| 4811 | 0.339 | Թաղանթանյութի մանրաթելից թուղթ և ստվարաթուղթ |
| 6912 | 0.339 | Ճաշի, խոհանոցի սպասք և այլ տնտեսական խեցեգործ իրեր |
| 4406 | 0.342 | Փայտակոճեր երկաթուղային կամ տրամվայի գծերի համար՝ |
| 4701 | 0.343 | Փայտանյութի զանգված |
| 7323 | 0.347 | Ճաշի, խոհանոցային արտադրատեսակներ կամ կենցաղային կարիքները հոգալու համար այլ արտադրատեսակներ եւ դրանց մասերը՝ սեւ մետաղներից. «բուրդ»՝ սեւ մետաղներից. ճիլոպներ՝ խոհանոցային սպասքը մաքրելու համար, բարձիկներ՝ մաքրելու եւ ողորկելու համար, ձեռնոցներ եւ նույնանման արտադրատեսակներ՝ սեւ մետաղներից՝ |
| 6808 | 0.347 | Սալիկ, պանել, բլոկ՝ բուսական մանրաթելից, ծղոտից, թեփից |
| 2808 | 0.349 | Ազոտական թթու |
| 5301 | 0.350 | Վուշի մանրաթել՝ չմանած |
| 5704 | 0.353 | Թաղյա գորգ և տեքստիլ հատակածածկ |
| 6914 | 0.353 | Կերամիկական այլ արտադրատեսակներ |
| 7228 | 0.354 | Անկյունակ, ձևավոր և հատուկ պրոֆիլ այլ որակավորված պողպատից |
| 8426 | 0.362 | Վերամբարձ կոունկ |
| 4822 | 0.362 | Թելերի կծկման համար օգտագործվող թղթե կոճ |
| 3305 | 0.367 | Մագերի հարդարման միջոց, օճառահեղուկ |
| 5007 | 0.367 | Բնական մետաքսե գործվածք |
| 2507 | 0.369 | Ճենակավ եւ այլ ճենակավային կավեր՝ կալցինացված կամ չկալցինացված |
| 7224 | 0.369 | Այլ որակավորված պողպատ |
| 7407 | 0.370 | Պղնձե ձողեր և պրոֆիլներ |
| 7325 | 0.371 | Սև մետաղե այլ ձուլածո արտադրանք |
| 7804 | 0.374 | Կապարե սալ, թերթ, ժապավեն, փայլաթիթեղ, փոշի և թեփուկ |
| 2939 | 0.375 | Բուսական ալկալոիդ, աղ, եթեր |
| 9301 | 0.376 | Մարտական զենք՝ բացի ռետլվերներից, ատրճանակներից եւ 9307 ապրանքային դիրքում նշված զենքերից |
| 7418 | 0.377 | Պղնձե ճաշի, խոհանոցի պարագա, սանտեխ. սարքեր և մասեր |
| 3502 | 0.386 | Ալբումիններ (սպիտակուցներ) և ածանցյալներ |
| 3902 | 0.386 | Պրոպիլենի պոլիմեր |
| 4011 | 0.387 | Ռետինե նոր անվադող |
| 3406 | 0.388 | Մոմեր և նմանատիպ արտադրանք |
| 7610 | 0.391 | Ալյումինե պատուհան, դուռ և շինարարական այլ իրեր |
| 7018 | 0.395 | Ապակե հուլունք, արձանիկ և այլ զարդարանք |
| 5803 | 0.396 | Գործվածք ոլորագարդ վերահյուսվածքով |
| 7115 | 0.397 | Այլ արտադրանք թանկ. մետաղներից եւ մետաղներից |
| 4903 | 0.404 | Գիրքնկարներ, նկարելու կամ գունավորելու համար գրքեր |

| | | |
|------|-------|--|
